

ԱՅԿԵՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ԱՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1900

ԹԻՒ 12

ԳԵՆՁԻ

Ի՞նչ զարմանալի շահեկանություն ունեցող գրուխ է այն որ կը պատմէ Նէեմանի բժշկություն վրայ: Անանկ գրուխ մըն է զոր մեր փոքրիկ բարեկամներէն շատը կարգացած են կրկին և կրկին, կամ իրենց ծնողներէն խնդրած են որ կարգան իրենց: Նորէն կարգացէք երբ այս երեսի պատկերին վրայ կը նայիք: Ասորի նշանաւոր զօրավար մը կար որ իր խելքով ու քաջութեամբ կարող եղած էր յաղթել իր երկրին բոլոր թշնամիները, բայց ինք բռնուած էր թշնամիէ մը, այսինքն՝ բորոտութենէ, և զանկա չէր կրցած յաղթել: Երբայեցի փոքրիկ սպասուհի մը կար անոր տան մէջ որ կարող եղաւ իր տէրոջ ցուցնել բորոտութենէն բժշկուելու ճամբան: Այն ատեն կար մեծ մարդարէն, ամենէն զարմանալի հրաշագործ մարդարէն, Մովսեսի օրերէն ի վեր: Կար նաև անոր ծառան Գէեզի, որ սովորաբար մարդարէին կ'ընկերանար:

Բայց ի՞նչ էր Գէեզիի մեղքը: Չէ՞ որ Նէեմանի ստացած բժշկությունը կ'արժէր Գէեզիի խնդրած արծաթը և հանդերձները: Այո, և շատ աւելի կ'արժէր: Նէեման կարող չէր զանոնք տալու: Այո, կարող էր և ուրախ ալ պիտի ըլլար անոնց քանիպատկը տալու: Ճշմարիտ հաճոյք մը եղաւ անոր, երբ տեսաւ թէ Գէեզի կու գար իրմէ բան մը խնդրել:

Գէեզիի մեղքը ստախօսութիւնն էր: Երկու սուտ խօսեցաւ Նէեմանի. մէկը սա էր թէ զինք իր տէրը զրկած էր, և միւսը՝ թէ երկու երիտասարդներ եկած էին որ պէտք ունէին հանդերձներուն և արծաթին: Յետոյ ծածկե-



լու համար զայս, սուտ խօսեցաւ իր տէրոջը՝ ըսելով, «Դառադ տեղ մը չգնաց»: Եւ անոր պատիժը արագ եկաւ. «Նէեմանին բորոտութիւնը քեզի ու քու սերունդիդ փակչի յաւտեան»:

Սիրելի տղաք, փախէք սուտ խօսելու մեղքէն: Պատիկ մեղք կ'երևնայ անիկա, բայց անանկ չէ: Սողոմոն իմաստուն կ'ըսէ, «Տէրը աս վեց բանէն կը զզուի, ու անոր հոգւոյն առջևը եօթը բան պիտի է»: Եւ ասոնց երկրորդն է «ստախօս լեզու»: Աս-

տուծոյ աչքին առջև ստախօսութիւնը ամենէն ատելի բաներէն մէկն է. Նիթէ սուտ խօսիք, բորոտութիւնը ձեր մարմնին պիտի չփակչի, բայց արատ մը պիտի գայ ձեր հոգիներուն վրայ, արատ մը՝ որ մինչև որ չմաքրուի, ձեզ անյարմար կ'ընէ երկնից սուրբ ընկերութեան մէջ մտնելու, ճիշդ ինչպէս որ բորոտ մը անյարմար է առողջներու մէջ բնակելու: Ուրեմն սուտ խօսելու փորձութեան հակառակ կեցեք:

1914 ՏՂԱՅ ՄԸ

Ջարմանալի պատմութիւն մը լըսուած է միսիոնարի մը վրայով, որ անգամ մը Հնդկաստանի մէկ անկիւնը գտնուող փոքրիկ գեղ մը զրկուեցաւ Հնդկական կրօնքէն ֆրիստոնէութեան դարձող վաթսուն եօթանասուն չափահաս անձեր մկրտելու և եկեղեցւոյ անդամ ընդունելու համար: Պայտօնին սկիզբները միսիոնարը իբր տասներկնգ տարեկան տղայ մը տեսած էր որ ետեի մէկ անկիւնը նըստած մեծ փափաքով կը նայէր և մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր: Եւ ահա յառաջ մօտեցաւ: «Ի՛նչ, տղաս, եկեղեցիին միանալ կ'ուզես:» «Այո, տէր:» «Բայց դուն շատ պզտիկ ես, և եթէ ես այսօր քեզ եկեղեցիին անդամ ընդունիմ և ետքը նորէն ետ դառնաս, այս եկեղեցիին վարկը կը կտարի և մեծ ֆնաս կ'ըլլայ ֆրիստոսի գործին: Ես նորէն հոս պիտի գամ վեց ամիսէն: Դուն այդ միջոցին շատ հաւատարիմ եղիր Տէր Յիսուս ֆրիստոսին, և եթէ կէս տարի ետքը նորէն գամ և քեզ տակաւին հաստատուն և հաւատարիմ գտնեմ, պիտի մկրտեմ քեզ և եկեղեցիին պիտի ընդունիմ:» Հաղիւ թէ ասիկա ըսաւ միսիոնարը, և ահա բոլոր ժողովուրդը ոտքի ելան, և մէկը միւսներուն բերնէն սապէս խօսեցաւ: «Տէր, առիկա է որ մեզի սորվեցուց ամէն ինչ որ դիտենք Յիսուս ֆրիստոսի վրայով:» Տղան եկեղեցիին ընդունուեցաւ: Անիկա եղաւ այն փոքրիկ եկեղեցիին փոքրիկ պայտօնեան, Աստուծոյ ձեռքին մէջ պատուաւոր գործիք մը բոլոր միւսները Յիսուս ֆրիստոսի փրկութեանը բերելու համար:


ԵՐԿՆԱՅԻՆ ՀՆՈՒՎԻՐԸ

Մարդ մը երբ օր մը թերթ մը կը գնէր լրագիր ծախող տղէ մը, ըսաւ անոր, «Տղաս, բարի ըլլալը դժուար կու գայ քեզի:» «Այո», պատասխանեց փոքրիկ տղան: «Ինձի ալ դժուար կու գայ», ըսաւ մարդը, «բայց ես օգնութիւն գտնելու կերպ մը գտայ: Կ'ուզե՞ս դիտնալ թէ ի՛նչ է այն:» «Այո, տէր:» «Ուրեմն հիմա հեռագիր մը զրկէ:» Տղան վեր նայեցաւ ապշած: Մարդը տղին ճակատին դպաւ իր մատով և ըսաւ: «Ի՛նչ կ'ընես ատոր մէջ:» «Կը խորհիմ», ըսաւ տղան: «Աստուած կրնայ տեսնել

խորհածդ:» «Կարծեմ կրնայ:» «Այո, կրնայ և կը տեսնէ: Երբ որ լրագիր ծախելու համար օգնութեան կամ բարի տղայ ըլլալու պէտք ունենաս, անմիջապէս ըսէ մտքովդ, «Յիսուս, օգնէ ինձի», և Աստուած պիտի տեսնէ և պիտի զրկէ օգնութիւնը:»

Բանի մը շարքէ ետքը մարդը նոյն փոքրիկ տղան պատահեցաւ փողոցին մէջ, և տղան անոր վագելով ըսաւ: «Տէր իմ, անցեալ քանի մը շաբաթներուն մէջ երկնային հեռագիրը փոփոխեցի, և առաջուրէն աւելի լրագիր ծախեցի:»

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ ԵՐԿՈՒՔՈՒԿԷՍ ԽԱՐԻ ԱՌԱՋ ՈՒՇԱԶԻՆԿ



թընի Ամերիկեան Ազգային Ժողովին Մատենադարանն այցելելու արտօնութիւնն ունեցանք: Այս մատենադարանը աշխարհիս ամենագեղեցիկ շէնքերէն մին է: Ազգային Ժողովը 1886ին ստակ յատկացուց յիշեալ շէնքին համար, գետին մը ծախու առնուեցաւ, որ իր վրայ գտնուած 70 բնակարաններովը 133,000 Օամ. ոսկիի եղաւ կառավարութեան: Գետինին վրայ գրանուած տուները վար առնուեցան, և շէնքին հիմը դրուեցաւ 1888ին ու Մատենադարանը ընկաւ 1897ին: Երկաքը, բայց ի գետնին համար արուած ստակէն, 1,374,000 Օամ. ոսկիի հասաւ: Այս պատկերը շէնքին ձեւին վրայ գաղափար մը կու տայ, բայց ոչ թէ անոր ընդարձակութեան կամ գեղեցկութեանը վրայ: Անոր երկայնութիւնը 470, և լայնութիւնը 340 ոտք է: Շէնքը ճերմակ կրանիթ քարէ շինուած է, և ներսի կողմը ճոխ է շատ

գոյներով Եւրոպայի, Ասիայի և Ամերիկայի ընտիր մարմարիոններով: Գրմբեթը պղնձով ծածկուած է, և պղինձը պատուած է թանձր ոսկի թիթեղով: Մուտքին ճակատի անագապղնձէ աղբիւրը, երեք անագապղնձէ գմբեթները, որոնք պատկերներով զարդարուած են, և արձանները դուրսի զարդերէն են: Բայց շէնքին ներսի կողմը, քանդակները, նկարները և միւս ճոխ և պերճ զարդերն են որ այցելուին կու տան մեծագոյն հաճոյք: Ներսի կողմը մէջտեղը կը գտնուի լնթերցարանի Սրահը, որ 250 ընթերցողներու համար պատրաստուած է և անոնց ամէն մէկուն յատուկ կայ գրասեղան մը և աթոռ մը: Միայն անոնք

որ տեսած են սրահը, կրնան իմանալ անոր գեղեցկութիւնը: Երկու տարի առաջ Մատենադարանին մէջ 748,115 գիրք և 245,000 տետրակներ կը գրանուէին: Բայց անոնց թիւը շարունակ կ'աւելնայ, և 4,500,000 գիրքերու տեղ կայ դարակներուն վրայ, որոնք եթէ ծայր ծայրի դրուին, 160 հազարամետր երկայնութիւն ունեցող դարակ մը կ'ըլլան: Մատենադարանը կապիտոլին հետ կապակցուած է հեռաձայններով և օդարանական խողովակներով: Եթէ Ազգային Ժողովին անդամներէն մէկը գիրք մը ուզէ, Մատենադարանի տեսուչին կը խօսի հեռաձայնով, և քանի մը վայրկեանէն գիրքը մթնոլորտի ճնշման միջոցով կու գայ խողովակին մէջէն, և սպասաւորը զանիկա ժողովականին գրասեղանին վրայ կը դնէ:

ՀՐԱՆՏ ԻՆՉՊԵՍ ԲՈՆՈՒՅԱԻ

Հրանտ կ'ուզէր իր տոբթոր հօրեղբոր խանութը կենալ, բայց տոբթորը միշտ չէր ուզեր զանհկա հոն մինակ թողուլ երբ ինք տեղ մը երթար. ինչու որ Հրանտ տոբթորին ըրած բաները գիտելու սովորութիւն ունէր, և տոբթորը կը վախնար թէ ան պիտի փաստէր ինքզինք, և Հրանտ ամէն բան խառնող տղայ մըն էր: Բայց օր մը մինակ մնաց խանութին մէջ և սկսաւ սեղանին վրայ գտնուած ամէն մէկ բանին վրայ նայիլ: Ելեկարական բախտը շատ կը սիրէր: «Ո՛հ, ես գիտեմ թէ ի՛նչպէս կը գործածեն», ըսաւ: «Եթէ մէկը գայ և ուզէ ելեկարականութիւնով դարմանուիլ, կըրնամ ընել հօրեղբայր տոբթորին պէս: Ահա ամէն բան պատրաստ է, հիմա բռնեցէք այդ կոթերէն:» Բռնելը բաւական դիւրին եղաւ. բայց թող տալը ուրիշ խնդիր էր: Ամէն փոքրիկ մանչ կամ աղջիկ որ երբեք փորձն առած է անոր, կը հասկնայ թէ Հրանտի բազուկներն ի՛նչպէս կը չարչարուէին ու կը ցաւէին: Բայց ան պէտք էր այնպէս բռնած մնար, չէր կրնար թող տալ: «Դուն այս անգամ բռնուեցար, Հրանտ», ըսաւ հօրեղբայրը, երբ ազատեց զանհկա: «Հիմա միտքդ պահէ թէ չար ունակութիւնները ելեկարական բախտէն աւելի ամուր կը բռնեն տղաքը և աւելի դժուար է անոնցմէ ազատուիլ: Եւ բաներ խառնելու սովորութիւնը գէշ ունակութիւն է:» «Ես ասկէ ետքը ատոնցմէ բանի մը պիտի չդպչիմ», ըսաւ Հրանտ:


ՄԱՐՄԻՆԻՆ ՄԵՋԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ

«Դմ բորբ մարմինիս մէջ քանի՞ ոսկորներ ունիմ, մայր» հարցոց Արամ իր մօրը: Այդ վայրկեանին Արամ կը լուար իր ձեռքերը, և երբ կը լուար, կը բանար և կը գօցէր, կ'ուրէր և կը դարձնէր զանոնք ամէն կողմ. և կը տեսնէր որ ձեռքը ամբողջ կտոր մը չէր, հապա շատ մը կտորներէ կը բազկանար: Ասոր վրայ սկսեց շօշափել իր ձեռքն ու մարմինը, և նայիլ իր ոտքերուն ու սրունքներուն վրայ, և տեսաւ որ ինք պզտիկ կտորներով շինուած է: Այս էր վերի հարցումն ընելուն պատճառը:

«Պիտի դարմանաս եթէ ըսեմ», պատասխանեց մայրը. «բայց միտք պիտի պահե՞ս:» «Այո, մայր, պիտի ջանամ պահել», ըսաւ Արամ, «բայց նայինք կրնամ ես հաշուել կարծեմ յիսուն

կտոր մը ըլլալու է:» «Ատկէ աւելի, տղաս. երկու հարիւր ութ:» «Երկու հարիւր ութ: Հաւատալս չգար: Գլուխս կլորակ մեծ կտոր մըն է, և...»

«Կեցիր, սիրելիս: Ոչ թէ կլորակ մեծ կտոր մը, անհկա երեսուն մանր ոսկորներէ շինուած է: Յիսունը չորս հատ կայ մարմինդ մէջ, երեսուն երկու հատ՝ ուսէդ մինչև մատներուդ ծայրերը, և երեսուն հատ՝ ազդրէդ մինչև ոտքի մատներուդ ծայրերը: Զեռքդ շատ զարմանալի փոքրիկ մեքենայ մըն է, այսպէս է նաև ոտքդ: Տես ի՛նչպէս կրնաս շարժել զանոնք ամէն կողմ: Անոնք քանի՞ բաներ կ'ընեն քեզի համար: Կը յուսամ թէ բնաւ մեղանչելու պիտի չգործածես քու ձեռքդ կամ ոտքդ, կամ մարմինդ ունէ մէկ մասը զոր Աստուած այսպէս զարմանալի կերպով շինած է:»



ՊԱՏ. ՍԻՄՈՆ ԳԱՆԻԹԵԱՆ

Շարաթաթերթ Ա-Ե-Ք-Ե-Ր-ԻՆ մէջ որ այս Տղայոց Ա-Ե-Ք-Ե-Ր-ԻՆ շարաթ մը ետքը կ'ելլէ, այս բարի մարդուն կեանքին և գործերուն վրայով քանի մը տեղեկութիւններ կու տանք: Պատ. Սիմոն Գանիթեան 80 տարիներէ աւելի առաջ ծնած էր պզտիկ գեղի մը մէջ, որուն բնակիչները գրեթէ ամէն ալ աղքատ էին, ուր դպրոց չկար և ուր գրեթէ չէր երևնար յոյս թէ անհկա ապագային մէջ սաստիկ աշխատող գեղացիէ մը տարբեր մէկը պիտի ըլլար: Հարստութիւն չունէր, բայց ստակէն աւելի արժէքաւոր դրամագլուխ մը ունէր, այն է՝ ճշմարտութիւնը գիտնալու և անոր հնազանդելու սաստիկ փափաք մը:

Ուստի Մուշի դպարին հարաւային կողմը գտնուող իր փոքրիկ գեղէն ելլելով, գնաց աւելի բաներ սորվելու հա-

մար Աստուծոյ և փրկութեան նկատմամբ Աստուծոյ ցուցած ճամբուն վրայ: Եւ երբ անոր անկեղծ հետազոտութիւնը վարձատրուեցաւ, ինչպէս Աստուած միշտ կը վարձատրէ զինք ճշմարտապէս փնտռողները, իր կեանքը նուիրեց ուրիշներու հաղորդելու ճշմարտութիւնը ինչպէս որ կ'երևնար իրեն: Մեք երբեք չենք գիտեր մարդ մը որ անկէ աւելի ճշմարտապէս փափաքող ըլլայ իր Աստուծային վարդապետը պատուելու, և ուրիշները զանհկա սիրելու և անոր ծառայելու առաջնորդելու:

Եւ երբ այս օրուան տղաքը կը տեղեկանան թէ այս խոնարհ գեղացի տղան ի՛նչ բարիքներ գործելու կարող եղաւ, վստահ ենք թէ պիտի քաջալերուին միևնոյն ազնիւ նպատակին համար ապրելու: Սիրելի տղաք, ձեզմէ շատերը պիտի չկանչուին հովիւներ և քարոզիչներ ըլլալու, բայց դուք ամէնքդ կանչուած էք գիտնալ և սիրել գրիստոս և անոր սէրը ուրիշներու գիտցնել:

ԿՈՐՍՈՒԱԾ ԵՒ ԳՏՆՈՒԱԾ

Շատ տարիներ առաջ մութ գիշեր մը օտար երկրի մը մէկ անտառին մէջ կը ճամբորդէր բարի մարդ մը: Գայլին ահուկի գոռումը և վայրի կատուին սոսկալի լացը ատեն ատեն կը խզէին գիշերուան տխուր լուսութիւնը: Մինչ կամաց կամաց յառաջ կ'երթար, մեղմ և փափուկ լացի մը ձայն լսեց: Տղու ձայն կարծեց: Կեցաւ և մտիկ ըրաւ: Բաւական հեռու կը թուէր ձայնը: Ինքնիրեն ըսաւ մարդը, «Ի՛նչ ընելու եմ. գուցէ վայրի կատու մըն է, ինչու որ այդ կենդանին իր աղաղակը նեղութեան մէջ գտնուողի մը ձայնին կը նմանցնէ, և մարդիկ իրեն կը քաջէ զանոնք գիշատելու և ուտելու համար: Գուցէ աւազակ մըն է որ կ'ուզէ խոտորցնել զիս ճամբէս, որպէս զի ստակս առնէ: Եթէ իրօք տղայ մըն է, այնպէս մութ է որ կը վախնամ թէ պիտի չկրնամ գտնել զանհկա:» Նորէն մըտիկ ըրաւ, և տակաւին կը լսէր մանուկի մը ձայն: Մարդը բարեսիրտ և հաստատամիտ մէկն էր: Նորէն ըսաւ ինքնիրեն, «Տղեկ մը ըլլալու է: Ես պիտի երթամ զանհկա ազատելու, թէպէտ կեանքիս վտանգ կենայ:» Ուստի ձիէն վար իջաւ, զանհկա ծառի մը կապեց և անտառին մէջ մտաւ այն կողմը ուրկէ լսեց լացին ձայնը: Բիչ մը երթալէն ետքը իրեն այնպէս թուեցաւ թէ աւելի հեռուէն կու գար

ձայնը և տարրեր կողմէ մը : Տակաւին կ'երթար յառաջ : Ժամանակ մը քաղերէն ետքը կեցաւ և ականջ դրաւ , և զգաց թէ պղտիկ ձեռք մը կը քաշէր իր հանդերձէն : Վար ծռեցաւ հասկնալու համար թէ ի՞նչ էր այն , եւ լսեց ցած , անուշ ձայն մը , « Հայրիկ , դժու էս » : Մարդը վերցուց փոքրիկը որ իբր չորս տարեկան էր : Բայց անիկա հիմա ինքզինք կորսնցըներու վտանգին մէջ կը գտնուէր , վասն զի չէր գիտեր թէ ի՞նչպէս պիտի գտնէր մութին մէջ իր ձիին քով երթալու ճամբան : Եւ սակայն Աստուած ուղղեց անոր ոտքերը և եկաւ գտաւ ձին : Տղեկը իր բազուկներուն մէջ առած՝ ձին հեծաւ , և ձին յառաջ քեց մինչև որ եկաւ տուն մը , իջաւ ձիէն և ներս մտաւ , և ահա անիկա տղին հօրը տունն էր : Տանը մէջ ուրախութիւն եղաւ : Հայրը և մայրը մարեցան երբ տեսան իրենց փոքրիկ տղան , վասն զի զանիկա մեռած կը կարծէին : Տան տղաքը կը ցատկըտէին և ծափ կը զարնէին և « Հէնրին եկաւ , Հէնրին եկաւ » , կ'աղաղակէին : Երեւոյն տղեկ , հօրը տունէն կորսուել էր զրբթէ երեք օրէ ի վեր : Գեղնած և զրբթէ սովամահ եղած էր : Եւ , ոհ , ի՞նչպէս ուրախ էր տուն հասնելուն համար : Տան մէջ գտնուողներն ամէնն ալ շատ ուրախացան , ինչու որ անոր վրայ կ'ողբային մեռած կարծելով : Կորսուած էր ու գտնուեցաւ :

Չէք կարծեր թէ այս տղան պիտի սիրէ այս մարդասէր բարեկամը , որ գայեցրու և վայրի կատուններու մէջերը գնաց և իր կեանքը վտանգի մէջ դրաւ զանիկա աղատելու համար : Անոր վրայ պիտի չլուսածէ երկար ատեն և ամէն բան պիտի չընէ՞ զանիկա հաճեցնելու համար : Բայց եթէ այդ փոքրիկ տղան չուզէր երթալ զինք անտառին մէջէն գտնող մարդուն հետ , ոչ միայն շատ ապերախտ պիտի ըլլար անոր մարդասիրութեան հանդէպ , հապա պիտի չազատուէր ալ : Բայց Յիսուս Փրկիչը եկած է մեզ փնտռելու մեր մոլորած ատենը , և սակայն որչափներ կը մերժեն անոր հրաւերը և կը կորսուին անապատին մէջ : Ականջ պիտի չդնենք անոր ձայնին և պիտի չերթանք անոր ետեւէն :



ՕՍՔԱՐ , ԱՐՁ ՈՐՄԱՅՈՂԸ

Երբ Անդրեան իբր շողոմեայ 1881ին Բեռլինի մարտիկներին մէջ փակուեցաւ , քանոնակարգու նաւորդները գառին վրայէն գաջին ցամաք՝

հոն շուրերէն քշուած փայտ գտնելու համար , որպէս զի վառէին : Հոն խորհիթ մը շինեցին , բայց իրենց ուտելիքը քիչ էր : Որսալու համար արջ միայն կը գտնուէր : Եւ Արջային , այսինքն Հիւսիսային , Բեռլինի ձմեռուան երեք ամսուան գիշերները արջը և ձիւնը այնպէս նոյն էին իրենց ճերմակ գոյներով՝ որ որսորդները շատ մօտէն միայն կրնային տեսնել արջը , և արջուն աղէկ էր այս բանը որսորդները բռնելու համար : Սովը կը տանջէր որսորդները , և ասոնք նստան և խօսեցան թէ ի՞նչ ընելու էին : Մէկը որ մտիկ կ'ընէր և միւսներուն չափ խորունկ ուշադրութիւն տուած էր խընդրին , շուն մըն էր : Անունն էր Օսքար : Որսորդները չէին գիտեր թէ անիկա կը հասկնար իրենց խօսածները : Մէյ մ'ալ նայիս շունը ոտք ելաւ յանկարծ , խրճիթին դուռը բանալ տուաւ և դուրս վազեց : Գնաց սառին վրայէն մինչև որ արջու մը հանդիպեցաւ : Այնուհետեւ հաշտեց գաղտնի վրայ և իր ետեւէն վազել տուաւ անոր : Ժամանակ ժամանակ կը դադարէր հաշտէ , և այսպէս կը թողար որ արջը իր ետեւէն վազէ , մինչև որ երկուքն ալ խրճիթին մօտեցան : Մարդիկը լսեցին Օսքարի հաշտու ձայները , առին իրենց հրացանները , դուրս ելան և զարկին արջը : Օսքար շարունակեց այսպէս արջերը դէպ ի խրճիթին առաջնորդելու գործը , որոնք կը խորհէին թէ զանիկա իրենց կերակուր պիտի ընէին , և ինք և նախն մէջ փակուած նաւորդները առատ կերակուր ունեցան բոլոր ձմեռը :

Գարունին , իսկ շողոմեային նաւապետը կրէյ՝ զրկուեցաւ կորսուած էր շողոմեայը փնտռելու համար : Նաւապետ կրէյ առաջուց գացած էր Արջային Բեռլին կողմերը , երկու նաւերը իրարու հանդիպեցան և մէկտեղ Անդրեան եկան , և Օսքարի տէրը միւս նաւապետին նուիրեց շունը , յուսալով թէ՛ եթէ դժուարութեան մը հանդիպի ան , Օսքար նոյն բարի ծառայութիւնը պիտի ընէ անոր ալ :



ԱՄԵՆԵՆ ՄԵՍ ՅԱՐԳԱՆՔԸ

Խոնաւ , միգապատ և տղմուտ օր մը փոքրիկ աղջիկ մը կը կանգնէր Լոնտոնի փողոցներէն մէկուն մէկ կողմը , և փողոցին դիմացը անցնելու առիթի մը կը սպասէր : Անոնք որ տեսած են Լոնտոնի փողոցները ասանկ օր մը , մութ , խոնաւ և տղմուտ , և դիտած են կառքերուն , հանրակառքերուն , ևն . վազելը , պիտի չզարմանան որ

պղտիկ աղջիկ մը վախնայ ասանկ Բաբելոնի մը մէջէն կտրել անցնելու : Անցորդներէն մէկ քանին անհօգ կ'երևնային , մէկ քանին արտորոք կ'երթային , և աղջիկը կը սպասէր և մէկը կը փնտռէր , մինչև որ բարձրահասակ և բարակ , և լուրջ բայց մարգասէր երևոյթով ծերունի մը փողոցն ի վար կու գար քալելով : Աղջիկը անոր երեսը նայեցաւ , և իրեն այնպէս երեցաւ թէ անոր մէջ կը տեսնէր այնպիսի մէկը որուն կը սպասէր , ուստի անոր գնաց և երկչոտութիւնով մը փոփոսաց , « Կը հաճի՞ք , տէր , ինձի օգնել դիմացն անցնելու » : Ծերունին փոքրիկ աղջիկը փողոցէն անդին անցուց : Երբ յետոյ պատուեց այս դէպքը , բաւաւ , « Այդ փոքրիկ աղջկան վատահոյթիւնը բոլոր կեանքիս մէջ ընդունած ամենէն մեծ յարգանքս էր » :

Այդ մարդը Լորտ Շաֆթըսպրին էր : Անիկա պատիւներ վայելած էր հօր ազգէ մը , յարգանք ընդունած էր երկրագունդիս ամենէն մեծ քաղաքէն , ընդունած էր արքունի գերդաստանին պատիւները , բայց կեանքին մէջ ընդունած ամենէն մեծ յարգանքն էր երբ այն փոքրիկ անձնութիւնը զատեց զինք բազմամբոխ Լոնտոնին մէջէն , և հասարակեցաւ վրատահիլ իրեն , թէպէտ ինք օտարական մըն էր , որպէս զի պաշտպանութիւն և օգնութիւն գտնուէր :



ԱՍՏՈՒԱԾ ԱՐԹՈՒՆ Է ՄԻՇՏ

Գեղեցիկ պատմութիւն մը լսուած է փոքրիկ աղջկան մը վրայ որուն հաւատքը կրնայ դաս մը սորվեցնել մեզի : Լամպարը նոր մարած էր , և փոքրիկ աղջիկը վախցաւ մութէն : Բայց նոյն ժամանակ տեսաւ պայծառ լուսինը պատահանին մէջէն , և հարցուց իր մօրը , « Լուսինը Աստուծոյ լոյսն է » : « Այո » , պատասխանեց մայրը , « Լուսինը և աստղերը ամէնքն ալ Աստուծոյ լոյսերն են » : « Աստուած իր լոյսը կը մարէ և ինք ալ քնանալու կ'երթայ » , նորէն հարցուց : « Ոչ , զաւակս » , պատասխանեց մայրը , « Աստուծոյ լոյսերը միշտ վառ են » : « Ուրեմն , մայրիկ » , բաւա աղջիկը , « քանի որ Աստուած արթուն է , չեմ վախնար » :

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ . արծաթ , կանիկ , աճէն տեղւոյ համար :

Ամերիկայի Միեռնաբար Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ . Բ . ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ . Ս . ՊԱՐԼՈՒՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ
Ի ՏՊԱՐԱՆ Ա . ՅԱՊԱ ԳՅՈՍԵՒՆ
Ճեմարանէլլար Եղեւշու , Ամերիկան Խաճ